ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 07/23

30.11.2023թ. ք. Երևան

**Սուրեն Անտոնյանի անհատական դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 144-րդ հոդվածի 1.1-րդ մասի իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի առնչությամբ**

## 1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

26.03.2007թ. թիվ ԵԷԴ/0299/02/08 քաղաքացիական գործով վճռաբեկ բողոք է ներկայացվել ՀՀ վճռաբեկ դատարան: Դատարանը 12.04.2007թ. որոշել է վերադարձնել բողոքը՝ ճանաչելով այն անընդունելի՝ հիմնավորվածության բացակայության հիմքով: Որոշումն օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէր:

07.09.2007թ. նույն գործով ներկայացվել է մեկ այլ վճռաբեկ բողոք, որը նույն թվականի հոկտեմբերի 1-ին ՀՀ վճռաբեկ դատարանը վարույթ է ընդունել:

12.12.2007թ. ՀՀ վճռաբեկ դատարանը ըստ էության քննել է ներկայացված բողոքը և մասնակիորեն բավարարել այն:

12.05.2008թ. գանգատ է ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ), որի առնչությամբ ՄԻԵԴ-ը 2015 թվականի դեկտեմբերի 3-ին կայացրել է *Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը: Վճիռը ուժի մեջ է մտել 2015 թվականի մարտի 3-ին: Վճռով արձանագրվել է դիմումատուի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության և սեփականությունից անարգել օգտվելու իրավունքների խախտումներ:

30.11.2022թ ՀՀ արդարադատության նախարարի թիվ 108-Ա որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր Սուրեն Անտոնյանի (այսուհետ նաև՝ Դիմող) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել *Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ վճռի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

Կարգապահական վարույթի հարուցման հիմք է ծառայել ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը (լրացված 25.03.2020 թվականին ընդունված ՀՕ-197-Ն ՀՀ սահմանադրական

օրենքով), նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 1.1-րդ մասը (լրացված 06.07.2022 թվականին ընդունված ՀՕ-333-Ն ՀՀ սահմանադրական օրենքով)

ՀՀ արդարադատության նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 111-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ) Դիմողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Խորհրդի 26.01.2023թ. թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշմամբ Դիմողի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցվել են:

## 2. ԴԻՄՈՒՄՈՎ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՐՈՒՅԹԸ

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ էական կարգապահական խախտում է՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակազրկման:

Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ժամկետները չեն տարածվում սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթների վրա: Եթե արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտումը հայտնաբերվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտի ուսումնասիրության արդյունքով, ապա այդ խախտման հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտն ուժի մեջ մտնելուց հետո անցել է 15 տարի:

Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

...

4) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

## 3. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական

վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Նույն նորմը սահմանված է նաև Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում: Այս կանոնից որևէ բացառություն չի նախատեսվում:

25.03.2020թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքը: Օրենքի 48-րդ հոդվածով Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «4*) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը*»:

Նույն օրենքի 58-րդ հոդվածի (Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ) 19-րդ մասի համաձայն՝ *սույն օրենքով լրացվող՝ 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով կարգապահական վարույթ կարող է հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կայացրած ակտերի հիման վրա*:

06.07.2022թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքը: Օրենքի 1-ին հոդվածի համաձայն Օրենքսգրքի 144-րդ հոդվածը լրացվել է 1.1-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. ««*1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ժամկետները չեն տարածվում սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթների վրա: Եթե արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտումը հայտնաբերվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտի ուսումնասիրության արդյունքով, ապա այդ խախտման հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտն ուժի մեջ մտնելուց հետո անցել է 15 տարի:*»:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի (Եզրապակիչ մաս և անցումային դրույթ) 2-րդ մասի համաձայն՝ *սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտումներով, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի:*

Նախքան մեջբերված իրավակարգավորումներին անդրադառնալը՝ նշենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտում արձանագրող ակտերի հիման վրա դատավորի նկատմամբ

կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր և առիթներ արդեն իսկ նախատեսված են եղել ինչպես ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքով, այնպես էլ 2007 թվականին ընդունված ՀՀ դատական օրենսգրքով, որի կարգավորումների շրջանակներում էլ վերը նշված հիմքով կարող էր հարուցվել կարգապահական վարույթը (տես օրինակ՝ Արդարադատության խորհրդի 11.07.2007թ. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Լեռնիկ Աթանյանին կարգապահական տույժի ենթարկելու մասին N ԱԽ-5-Ո-14 որոշումը[1]):

*Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ վճռի կայացման պահին (2015 թվականի դեկտեմբերի 3) գործող ՀՀ դատական օրենսգրքի (ընդունված 21.02.2007թ.) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերելի նորմերն ունեին հետևյալ բովանդակությունը: ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերն են՝

1) արդարադատություն իրականացնելիս նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ.

2) արդարադատություն իրականացնելիս դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ:

ՀՀ դատական օրենսգրքի 153.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով՝ տվյալ գործով կամ հարցով համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում:

ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտով հաստատվել է, որ տվյալ գործը քննելիս Հայաստանի Հանրապետության դատարանը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում, սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ժամկետները[2] հաշվարկվում են տվյալ դատական ակտը կայացնելու պահից:

Բերված իրավանորմերի վերլուծությունից կարելի է հանգել այն հետևության, որ *Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ վճռով հաստատված խախտման հիման վրա Դիմողի նկատմամբ կարգապահական վարույթ կարող էր հարուցվել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 3-ը: Եթե մի պահ ընդունենք, որ իրավաբանորեն ավելի ճիշտ կլիներ ժամկետը հաշվարկել ոչ թե ՄԻԵԴ վճռի կայացնելու, այլ դրա ուժի մեջ մտնելու պահից, ապա վերոնշյալ վարույթի հարուցման ժամկետը կավարտվեր 2017 թվականի մարտի 3-ին՝ նկատի ունենալով, որ *Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ վճիռն ուժի մեջ է մտել 2016 թվականի մարտի 3-ին:

Այստեղից ուղղակիորեն բխում է, որ Օրենսգրքում ՀՕ-197-Ն և ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքների ընդունմամբ կատարված փոփոխությունները և լրացումները դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթների առնչությամբ պարունակել են անձի իրավական դրությունը

---

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=37630

[2] ՀՀ դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում հղման հետ կապված վրիպակ է տեղի ունեցել: «Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված» բառերի փոխարեն պետք է լիներ «153.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված» բառերը:

վատթարացնող դրույթներ՝ առնվազն կարգապահական վարույթների հարուցման հիմքերին վերաբերող ժամկետների երկարացման մասով, որոնք ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածի ուժով չէին կարող ունենալ հետադարձ ուժ:

Եթե նույնիսկ ընդունենք, որ Դիմողի նկատմամբ 2007 թվականի ՀՀ դատական օրենսգրքի վերաբերելի դրույթները կիրառելի չէին, ապա հարկ կլինի անդրադառնալ ՀՕ-197-Ն օրենքի անցումային դրույթներին: Նախ, այդ օրենքի 58-րդ հոդվածի 19-րդ մասով ուղղակիորեն սահմանվել է, որ սույն օրենքով լրացվող՝ 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով կարգապահական վարույթ կարող է հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կայացրած ակտերի հիման վրա: Բացի այդ նույն հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի՝ կարգապահական պատասխանատվության հիմքերի և վարույթի վերաբերյալ դրույթները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված կարգապահական վարույթների նկատմամբ: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ծագած հիմքերով (խախտումներով) հարուցվող կարգապահական վարույթների հարուցման նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենսգրքի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և 144-րդ հոդվածով նախատեսված ժամկետները: Մինչ ՀՕ-197-Ն օրենքի ընդունումը Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում էր. «1.Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքերով՝ խախտումը հայտնաբերելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում: Եթե խախտումը հայտնաբերվել է մինչև դատական վարույթն ավարտվելը, ապա սույն կետով նախատեսված վեցամսյա ժամկետը հաշվարկվում է դատական վարույթն ավարտվելու պահից: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե դատական վարույթն ավարտվելուց հետո անցել է հինգ տարի.»: Այսինքն նույնիսկ այս դեպքում օրենքը սահմանել է, որ Դիմողի նկատմամբ չէր կարող կարգապահական վարույթ հարուցվել:

Այնուհետև, ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքի հիման վրա ընդունվել է անձի իրավական վիճակն էլ ավելի վատթարացնող նորմ՝ սահմանելով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտն ուժի մեջ մտնելուց հետո 15 տարվա ընթացքում կարող է դատավորին կարգապահական պատասխանատվության վարույթ հարուցվել: Ավելին, իր հերթին էլ ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքի անցումային դրույթով սահմանվել է, որ կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաև **մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված** Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտումներով, **եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի:**

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՄԻԵԴ վճռի հիման վրա կարգապահական վարույթներ հարուցելու ժամկետների հաշվարկման մասով Օրենսգիրքը առանձին կարգավորումներ չէր նախատեսում, ինչի անհրաժեշտությունը կար և ինչը նախատեսված էր նախկին Դատական օրենսգրքում: Բայց չափազանց երկար ժամկետների սահմանումը և դրանց հետադարձ ուժ տալը իրավունքի գերակայության և դրա բաղադրիչը կազմող իրավական որոշակիության սկզբունքի հետ անհամատեղելի են:

Կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի համար երկար կամ անսահմանափակ ժամկետի սահմանմանն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Համաձայն ՄԻԵԴ նախադեպային իրավունքի՝ «Դատարանը գտել է, որ վաղեմության ժամկետները ծառայում են մի քանի կարևոր նպատակների, մասնավորապես՝ ապահովելու իրավական որոշակիություն և վերջնականություն, պաշտպանելու պոտենցիալ մեղադրյալներին հնացած պահանջներից, ում համար հնարավոր է դժվար լինի հակազդել և կանխել ցանկացած անարդարություն, որը կարող է ծագել, եթե դատարաններից պահանջվի որոշում կայացնել այն իրադարձությունների վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք հնարավոր է տևական ժամանակ անցնելու պատճառով դարձել են անարժանահավատ և ոչ ամբողջական: Քրեական, կարգապահական և այլ իրավախախտումների առնչությամբ վաղեմության ժամկետները Պայմանավորվող պետությունների ներպետական իրավական համակարգերի ընդհանուր հատկանիշն են: Ամփոփելով իր դիրքորոշումը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է. «Թեև Դատարանը նպատակահարմար չի գտնում նշել, թե որքան պետք է լինի վաղեմության ժամկետը, այն գտնում է, որ կարգապահական վարույթների նկատմամբ նման անժամկետ մոտեցումը լուրջ վտանգ է ներկայացնում իրավական որոշակիության սկզբունքին:» (տես՝ Oleksandr Volkov v. Ukraine, գանգատ թիվ 21722/11, վճիռ 09.01.2013թ., պարբ. 132-140):

Կարգապահական վարույթների համար չափազանց երկար ժամկետների սահմանումը խնդրահարույց է նաև օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի տեսանկյունից: Մասնավորապես, նման ժամկետները վարույթ հարուցելու լիազորություն ունեցող սուբյեկտներին կարող են վարույթները շատ ուշ հարուցելու լայն հայեցողություն տալ, ինչը կարող է պարարտ հող ստեղծել կարգապահական պատասխանատվության ենթակա անձին տույժի ենթարկելու դժվարության կամ անհնարինության համար:

Բացի այդ, Դիմողի նկատմամբ կայացված Խորհրդի որոշման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կարգապահական վարույթի հարուցման հիմքերի համար նախատեսված ժամկետը կիրառվել է վարույթ հարուցելու առիթի նկատմամբ, ինչը էլ ավելի է խճճել իրավիճակը:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի սահմանադրականության հարցին, ապա Պալատը նպատակահարմար չի գտնում անդրադառնալ դրան նկատի ունենալով այն, որ Դիմողի կողմից թույլ տրված խախտման փաստն արդեն իսկ հաստատվել է *Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված և ուժի մեջ մտած վճռով:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ **Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 144-րդ հոդվածի 1.1-րդ մասի կարգավորումները ՀՀ սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց են:**

***Համակարգող՝***

***Ա. Ասատրյան***